

ՍԱՂՄՈՍ 122

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Երուսաղեմի խաղաղության համար աղոթք	ՏԻՐՈՉ Տունը գնալու ուրախությունը	Ուխտագնացների Սիոնի գովքը Երուսաղեմին մոտենալիս	Երուսաղեմի գովքը	Կեցցե՛ր Երուսաղեմը
<u>MT ներածություն</u> Դավթի աստիճանների երգը				
122:1-5	122:1-2 122:3-5	122:1-2 122:3-5	122:1-2 122:3-5	122:1-2 122:3-5
122:6-9	122:6-9	122:6-9	122:6-9	122:6-7 122:8-9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ – MT մակագրությունների համար տես Սաղմոս 120-ի ամբողջական գրառումը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 122:1-5</p> <p>¹Ուրախանում էի, երբ ինձ ասում էին . «Գնանք ՏԻՐՈՉ տունը»: ²Մեր ոտքերը Քո դռների մեջ են կանգնելու, ո՛վ Երուսաղեմ: ³Երուսաղեմը իրար հետ միաձուլված քաղաքի պես է կառուցված: ⁴Ցեղերը՝ ՏԻՐՈՉ բոլոր ցեղերն այնտեղ են ելնում, Ըստ Խորայելի վկայության՝ ՏԻՐՈՉ անվանը գոհություն մատուցելու համար: ⁵Քանի որ այնտեղ են դրված դատաստանի աթոռները՝ Դավթի տան աթոռները:</p>

122:1 «**ինձ ասում էին**» Այս Սաղմոսը նկարագրում է մի ուխտավորի, որը տաճարի մոտ է, հավանաբար ամենամյա տոնական օրով (տես՝ Սաղմ. 122:4, Դևտագիների 23) կամ հրավիրված իրադարձության ժամանակ:

«Նրանք»-ը վերաբերում է՝

1. ուխտագրացներին, որոնք Երուսաղեմի ճանապարհին են
2. տեղի Ղևտացիներին, որոնք դիմավորում են Երուսաղեմ մտնող ուխտագնացներին
3. պատարագային նկարագրություն

Երուսաղեմը Աստծո բնակության «հատուկ վայրն» էր Միացյալ Միապետության և Բաժանված Միապետության ժամանակ: Բաբելոնյան գերությունից հետո, երբ հրեաներին թույլատրվեց վերադառնալ (այսինքն՝ Կյուրոսի հրամանագիրը, Բ. Ա. 538թ), այն դարձավ շատ ավելի թանկագին ճամփորդություն վերականգնված Իսրայելացիների համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ՏՈՆԵՐԸ

122:2 «Ոտքեր» կամ «քայլեր» բառերի նկարագրությունը աստվածահաճո կյանքի աստվածաբանական լեզվի մի մասն է կազմում: Աստծո կամքը հստակ հայտնված ճանապարհ է: Վերջնական նպատակը տաճարում Աստծո ներկայության մեջ մտնելն էր: Սա նաև կիրառվում էր Աստծո հետ կյանքի ավարտին հաղորդկացվելու ժամանակ (տես՝ Հոր 14:13-17, Սաղմ. 23:4-6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱԳԱՐՀԸ

❖ **«Երուսաղեմ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄՈՐԻԱ, ՍԱՂԵՄ, ՀԵԲՈՒՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՍԻՈՆ

122:3 Սա անսովոր համար է: Դժվար է իմանալ ստույգ ինչն է հաստատվում կամ գովերգվում: ԲԱՅԸ (BDB 287, KB 287, Pual ՎԱՂԱԿԱՏԱՐ) հիմնականում կիրառվում է միացվող առարկաների համար: Pual արմատի տեսքով այն կարծես թե մատնանշում է՝

1. Եփուտի երկու ուսակտորները – Ելից 28:7, 39:4
2. հետգերության Երուսաղեմի արագ վերակառուցված պարիսպը – Նեեմ. 4:6
3. դաշնակիցներ – Սաղմ. 94:20
4. միասին ապրող մարդիկ – Ժող. 9:4

Այստեղ այն կարծես թե մատնանշում է լավ նախագծված և լավ կապակցված քաղաքի հաստակագիծ: Հրեական Սերտողության Աստվածաշունչը, էջ՝ 1426, առաջարկում է, որ սա նկատի ունի Նեեմիայի ժամանակը: Նա պետք է քաղաքն ավելի փոքրացներ, որպեսզի՝

1. արագ կառուցեր
2. մարդիկ պետք է կարգեր հսկելու և պաշտպանելու համար

122:4 2 Օրինացում Մովսեսը կարգադրում է Իսրայելին գնալ հատուկ վայր ՅԱՀՎԵԻՆ երկրպագելու համար (2 Օր. 16:16): Այս համարը ակնարկում է այս ամենամյա երկրպագության հավաքները (տես՝ Ղևտացիների 23):

❖	
NASB	«հրաման»
NKJV, LXX, Peshitta	«վկայություն»
NRSV	«արձակվեց»
TEV	«հրահանգ»
NJB	«նշան»
JPSOA	«հրամայված էր»
REB	«պարտականությունը»

Այս ԻԳԱԿԱՆ ՍԵՌ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 730) սովորաբար թարգմանվում է «վկայություն»: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հետաքրքիր է, որ DSS ձեռագիրը տալիս է «Իսրայելի հասարակությունը» ԳՈՅԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ փոխարեն: Որոշ թարգմանիչներ ենթադրել են, որ Սաղմ.122:3բ նաև վերաբերում է «միացյալ ժողովուրդների» հասարակության:

❖ «Իսրայել» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼ (անունը)

❖ «գոհություն մատուցելու» Սա վերաբերում է տաճարի երկրպագությանը:

1. պատարագ
2. գոհաբերություն

❖ «ՏԻՐՈՋ անունը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

Սաղմոս 122:4գ-ում կիրառվում է Աստծո ուխտի ամբողջական անունը՝ ՅԱՀՎԵ (BDB 217), սակայն ՅԱՀ (BDB 219) հապավումը կիրառվում է 122:4ա-ում:

122:5 «այթոռ/գահ» բառը ներկայացնում է՝

1. օրինական որոշումները՝ 2 Օր. 17:8
2. թագավորություն՝ Սաղմ. 89:4,29,36, 132:12

Իր սերունդների համար Աստծո խոստումը Դավթին գտնվում է 2 Թագավորաց 7, 1 Մնացորդաց 17-ում, իսկ Մեսիական կողմը՝ Եսայի 9, 11, Միքիա 5-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

❖ «Դավիթ» Հրեական Սերտոդության Աստվածաշունչը, էջ՝ 1426, նշում է, որ այս անվան անսովոր հեգումը (717) արտացոլում է հետզերության շրջանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 122:6-9

⁶Աղոթեցեք Երուսաղեմի խաղաղության համար .

Քեզ սիրողները բարգավաճելու են:

⁷Խաղաղություն թող լինի Քո պարիսպներից ներս,

Ու շնություն Քո պալատներում:

⁸Ի սեր իմ եղբայրների ու ընկերակիցների՝ հիմա ասելու եմ .

«Խաղաղություն թող լինի քո մեջ»:

⁹Մեր ՏԵՐ Աստծո տան համար քո բարօրությունն են փնտրելու:

122:6-9 Այս պարբերությունը մատնանշում է աղոթքի կանչ:

1. *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ – Սաղմ. 122:6ա
2. երկու ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐ – Սաղմ. 122:6բ, 7ա
3. երկու ԸՂՁԱԿԱՆՆԵՐ – Սաղմ. 122:8բ, 9բ

Քանի որ Երուսաղեմը Դավթի Թագավորության մայրաքաղաքն էր և տաճարի մշտական տեղանքը, այն ՀԿ-ում ուներ հատուկ շեշտադրություն:

Այդուհանդերձ, ես կարծում եմ ՆԿ-ը ընդհանրացրել է Իսրայելին տրված ազգային խոստումները՝ ներառելով ամբողջ մարդկությանը: Սուրբգրային հավատքի նպատակը այլևս Երուսաղեմում գտնվող տաճարը չէ, այլ նոր և ավելի գերազանց տաճարը Հիսուսի մեջ (տես Եբրայեցիների գիրքը): Ո՛չ Հիսուսը և ո՛չ էլ որևէ Առաքյալ երբևէ չեն վերահաստատել Իսրայելին տրված ազգային, աշխարհագրական խոստումները: Ես գիտեմ, որ այն ինչ ասում եմ, տարբերվում է ձեր լսած շատ հեղինակներից, քարոզիչներից, սեմինարներից: Ինդրում եմ ստուգեք հետևյալ Հատուկ Թեմաները նախքան կհերքեք այս աստվածաբանական պնդումը:

1. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒՒՄ ԵՆ ՀԿ-ՅԱՆ ՈՒՄՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԹՎՈՒՄ ԱՅՍԶԱՆ ՏԱՐԲԵՐ ՆԿ-ՅԱՆ ՈՒՄՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ
2. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

122:6 «խաղաղություն» «Խաղաղություն» (BDB 1022) տերմինը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (shalom)) ձևավորում է «Երուսաղեմ» անվան մի մասը: Հիշեք, որ տաճարի տեղանքը Մորիա լեռն էր (տես՝ Ծննդոց 22): Ծննդոց 14-ում այն այն կոչվում է «Սաղեմ»: Այս

բառախաղերը այնքան ստուգաբանական չեն, որքան Եբրայերենում հնչյունախաղերը, սակայն այս բառերը եբրայերեն չեն:

Ուշադրություն դարձրեք Սաղմ. 122:6-ում հնչյունախաղերի քանակին՝

1. աղոթել ֵאָשׁ – (BDB 981, KB 1371)
2. խաղաղություն ֶשׁוֹלֵם – (BDB 1022)
3. Երուսաղեմ ֵיִרוּשָׁיִם – (BDB 436)
4. բարգավաճել ִשְׁבַּח – (BDB 1017, KB 1503)

❖ **«քեզ սիրողները բարգավաճելու են»** Նմանատիպ արտահայտություն հաճախ է օգտագործվում «Բարգավաճման Ավետարանի» քարոզիչների կողմից՝ խոստման սուրբգրային ապացույց ներկայացնելու համար: Խնդրում եմ նայեք իմ սիրելի խարիզմատ գիտնական Գորդոն Ֆիի կողմից գրված *Առողջության, հարստության Ավետարանների հիվանդությունը* գրքույկը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Իսրայելի պատմության ո՞ր ժամանակաշրջանին է կապված այս Սաղմոսը:
2. Ինչպե՞ս է Սաղմ. 122:5-ը կապված 2 Թագավորաց 7-ի հետ:
3. Արդյո՞ք պետք է Քրիստոնյաները դեռ աղոթեն Երուսաղեմի խաղաղության համար, որպեսզի անձնական բարգավաճում ունենան: